Ն. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ.—Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX—XIV դդ., Երևան, 1970, 462 էջ

«Հայաստան» հրատարակչությունը 1970 թ. հրատարակեց տնտեսագիտական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ն. Ռ. Թովմասյանի «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX—XIV դարերում» խորագրով աշխատությունը։ Այս արժեքավոր գործում սկզբունքորեն հիման վրա մարքսիզմ-լենինիզմի դիրքերից տնտեսագիտական վերլուծության է ենթարկված հայ սոցիալ-տնտեսագիտական մտքի պատմությունը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում։

Գրախոսվող աշխատության ներածության մեջ հեղինակը ընդգծում է, որ պետք է մատենագիրների աշխատությունների, կանոնագրերի, տնտեսական օրենսդրությունների ու ժամանակագրությունների քրիստոնեական դոգմաներով պարուրված շղարշի տակից հմտորեն բացահայտել կյանքի առաջընթացն արտացոլող սոցիալ-տնտեսագիտական գաղափարները։

Ուսումնասիրողը հայ մատենագիրների աշխատություններից վերլուծում է այն, ինչ կարևոր է տնտեսագիտական գաղափարների առաջացման ու զարգացման գործում և փաստական հարուստ նյութի հիման վրա կատարում է ընդհանրացումներ։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է ներածությունից, պատմա-տնտեսական ակնարկից և երկու բաժնից։ Առաջին՝ «Սոցիալ-տնտեսագիտական միտքը հայ մատենագրության մեջ» բաղկացած է չորս գլուխներից, իսկ երկրորդը՝ «Սոցիալ-տնտեսագիտական միտքը ժողովրդական ստեղծագործություններում»՝ երեք գլխից։ Պատմա-տնտեսական ակնարկում բնութագրված է զարգացած ֆեոդալիզմը Հայաստանում, որը ընդգրկում է IX—XIII դդ., այսինքն Բագրատունիների տիրապետության ժամանակ սկզբնավորված տնտեսական ու քաղաքական անկախության վերականգնումից մինչև Հայաստանի նվաճումը մոնղոլական ցեղերի կողմից։ IX—XIII դդ. հանդիսանալով հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության համար մարտման ժամանակաշրջան, միաժամանակ բնորոշվում են տնտեսական ու մշակութային զարգացմամբ։

Զարգացած ֆեոդալիզմին բնորոշ են ապրանքա-դրամական հարաբերությունների առաջընթացը և սոցիալական հակասությունների խորացումը։

Առաջին բաժնի առաջին գլխում Թովմա Արծրունու, Արիստակես Լաստիվերցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Դավիթ Սլավկա որդու, Մաթևոս Ուռհայեցու, Գրիգոր Մագիստրոսի, Մովսես Կաղանկատվացու, Գրիգոր Նարեկացու և Ֆրիկի ասույթների հիման վրա շարադրված են տնտեսության, հասարակական հարաբերությունների, դասակարգային հակամարտությունների և մշակույթի զարգացման հիմնական տենդենցները Հայաստանում՝ զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում։ Ֆեոդալական բնատնտեսությանը զուգընթաց զարգանում էին պարզ ապրանքային արտադրությունը, առևտուրն ու վաշխառությունը, ինչպես վկայում են Ստեփանոս Տարոնացին ու Թովմա Արծրունին, լայն չափով զարգանում էին նաև ոսկերչությունն ու արծաթագործությունը։ Մատենագիրները, հիմնականում արհամարհելով արծաթասիրությունն ու գանձակուտակումը, այլ կերպ ասած՝ թշնամանք արտահայտելով բնատնտեսությունը քայքայող խոշոր առևտրի ու վաշխառության նկատմամբ, նկատում են, որ պետության հարստացման, հզորացման և բնակչության գոյության հիմքը նյութական բարիքների արտադրության զարգացումն է։

Այս գլխում հեղինակը Արիստակես Լաստիվերցու, Գրիգոր Մագիստրոսի և Ներսես Շնորհալու աշխատությունների հիման վրա տալիս է թոնդրակեցիների շարժման ու գաղափարախոսության համառոտ, հաջողված բնութագրումը։ Թոնդրակեցիները ժխտում էին կրոնի գաղափարական հիմքերը, ծիսակատարությունները, ավերում եկեղեցիները և պայքարում էին ֆեոդալական շահագործման դեմ, պահանջում ունեցվածքային իրավական հավասարություն, մաքառում էին արտադրության միջոցների հավասար տիրապետության համար, ժխտում Քրիստոսի գոյությունը, պահանջում սեռերի հավասարություն և հանդերձյալ աշխարհի քրիստոնեական դրախտին հակադրում էին իրական կյանքում աշխատավորների դրության բարելավում և այլ պահանջներ։

Իրավացի է հեղինակը, երբ ընդգծում է, որ հայ ժողովուրդը օտարազգի նվաճողների դեմ հերոսական պայքարով է պահպանել իր ազգային ինքնուրույնությունը։

Առաջին գլխի վերջում համառոտակի տրված են շարադրանքից բխող եզրակացությունները, սակայն հարկ եղած չափով չեն արժեքավորված Ֆրիկի սոցիալ-հասարակական հայացքները, այն ներկայացված է շատ համառոտ և կցկտուր։ Այս գլխում կան մասնակի սայթաքումներ։ Ամենից առաջ այն հանգամանքը, որ մատենագիրները նյութական բարիքների արտադրություն համարում են մարդկանց կարիքների բավարարման և պետության հարստացման ու հզորացման ադբյուր, հիմք չի տալիս կատարելու այսպիսի եզրակացություն Թովմա Արծրունու կապակցությամբ, որ իբր «բնակչության բարեկեցությունն ու պետության հարստացումը նա սերտորեն կապում է միմյանց հետ» (էջ 44)։ Այնինչ, մատենագիրների ասույթների վերլուծությունից ակնհայտորեն երևում է, որ նրանց հոգատարության առարկան ոչ թե բնակչության բարեկեցությունն է, այլ քրիստոնեական վարդապետության հիմունքներին հակադրվող օրինազանցությունների, իշխողների այլանդակ բարքերի քննադատությունը։ Ուստի տեղին չէ հեղինակի հետևյալ դրույթը. «Անհրաժեշտ է նշել, որ ֆեոդալական օրինականության պահպանման մեր մատենագիրների պահանջը պետք է գնահատվի դրականորեն այն առումով, որ այդ պահանջը ուղղված էր աշխարհիկ ու հոգևոր իշխանավորների կամայականությունների դեմ, նպատակ ուներ ոանձահարել նրանց, շահագործման հարաբերությունները դնել որոշ շրջանակների մեջ» (էջ 63)։ Մեր կարծիքով՝ մատենագիրների մոտ դրականը հանդիսանում է սոցիալ-տնտեսական կյանքի իրական պայմանների արձանագրումը, որոնցից, սակայն, նրանք, որպես տիրող դասակարգի գաղափարախոսներ, հարկ եղած եզրակացություններ անել չէին կարող, կամայականությունների սանձահարման դրությունը նրանց մոտ հանդես է գալիս որպես միջոց ապստամբություններին ու ազանդավորական շարժումներին տեղիք չտալու համար, որով նրանք ձգտել են ավելի ամուր ու հնտեղականորեն պահպանել ֆեոդալական կարգերը։

Ուսումնասիրողը գրում է. «Ֆեոդալական հասարակության սոցիալական երևույթների Նարեկացու վերլուծությունը շատ խորն է ու մեծարժեք» (էջ 98)։ Բայց շարադրանքից պարզվում է, որ նրա բողոքը տիրող այլանդակությունների դեմ պասսիվ է և ոչ հարձակողական։ Մի՞թե Նարեկացու չերմեռանդ պայքարը առաջադեմ ազանդավորական շարժումների դեմ կարելի է դիտել որպես դրական խորաթափանց ու մեծարժեք վերլուծություն միայն այն պատճառով, որ նա հարկադրված է նշել հակառակորդին՝ նրան ջախջախիչ հարված հասցնելու նպատակով։ Առարկելի է հեղինակի նաև հետևյալ դրույթը. «Գրիգոր Նարեկացին ոչ իր աշխարհայացքով և ոչ էլ իր դաղափարախոսությամբ հեղափոխական չէր, բայց իր միստիցիզմով և հասարակության սոցիալական հակասությունների ծավալուն քննադատությամբ օբյեկտիվորեն գտնվում է ֆեոդալիզմի նկատմամբ օպոզիցիոն դիրքում և կողմնակիորեն նպաստում հակաֆեոդալական տրամադրությունների աճմանն ու այդ տիպի շարժումների զարգացմանը» (էջ 100)։

Մեր մատենագիրների գործերը, անշուշտ, մեծ արժեք են ներկայացնում նրանց ժամանակաշրջանի հասարակական սոցիալ-տնտեսական փիլիսոփայական և այլ հայացքներն ըմբռնելու համար։ Սակայն նրանց որոշ սահմանափակ քննադատական վերաբերմունքը գոյություն ունեցող այլանդակությունների նկատմամբ հիմք չի հանդիսանում նրանց վերագրել օպոզիցիոն դիրք ֆեոդալիզմի նկատմամբ և հայտարարել, որ նրանք կողմնակիորեն նպաստել են հակաֆեոդալական տրամադրությունների աճմանը, նույնիսկ այդօրինակ շարժումների զարգացմանը։ Համենայն դեպս, պրոֆ. Ն. Թովմասյանի մեջ բերած նյութով չի հիմնավորվում վերոհիշյալ եզրակացությունը։

Առաջին բաժնի երկրորդ գլուխը նվիրված է Մխիթար Գոշի սոցիալ-տնտեսագիտական հայացքների վերլուծությանը։ Ապրելով ու ստեղծագործելով Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանում, երբ սելջուկների լծից ազատագրվող Հայաստանում վերականգնվում է քաղաքական ինքնուրույնությունը, Մխիթար Գոշը ողջունում է այդ զարթոնքը։

Այս գլխում նյութի խոր իմացությամբ հիմնավորված է, որ «Մխիթար Գոշի աշխատությունները տնտեսական երևույթների ընդգրկման լայն շրջանակներով և դրանց վերլուծության խորությամբ իրենց ուրույն տեղն ունեն ոչ միայն հայ, այլև միջնադարյան համաշխարհային տնտեսագիտության պատմության մեջ» (էջ 160)։ Նրա Դատաստանագիրքը էպոխայի սոցիալ-տնտեսագիտական ու հասարակական կյանքն արտացոլող մի հանրագիտարան է, որտեղ երևում են հեղինակի գիտական մեծությունն ու առաջադիմական խորաթափանցությունը։ Գոշը որպես ֆեոդալական ազնվականության գաղափարախոս, պաշտպանում է ճորտատիրական սեփականությունն ու հասարակարգը, բայց նա տեսնում է սկզբնավորվող նոր հարաբերությունների ծիլերն ու հակաֆեոդալական տենդենցները։ Նրա աշխատություններում տրված են ֆեոդալական ռենտա-

լի երեք ձևերը, բացահայտված են արհեստագործության, առևտրի ու դրամաշրջանառության զարգացման, մշակների վարձատրության չափի ու ապրանքների մակարդակի, աշխատանքի հասարակական բաժանման ու արտադրության ճյուղերի դասակարգման հարցերը։ Հնսաբանված են ֆեոդալիզմի սոցիալական հակասությունները և խորը քննադատության են ենթարկված ճորտատիրական հասարակարգի սոցիալական անարդարություններն ու այլանդակ կողմերը։

Այս բաժնի երրորդ գլխում քննադատաբար շարադրված են Սմբատ Սպարապետի (1208—1276 թթ.) սոցիալ-տնտեսագիտական հայացքները։ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում քննվող հիմնական խնդիրներն են՝ արքունի տնտեսության զարգացման և եկեղեցական տնտեսության ամրապնդման ուղիները։ Սմբատ Սպարապետը քննում է նաև հասարակական տարբեր խմբերի տնտեսական փոխհարաբերությունները և վկայում վարձու աշխատանքի կիրառման մասին։ Հարկ է նշել, որ այս գլուխը մակերեսային է ու սխեմատիկ, որը հետևանք է հեղինակի այն միակողմանի մոտեցման, թե պետք է վերցնել «հեղինակներից այն դրականն ու արժեքավորը, որը նպաստել է տնտեսագիտության ձևավորմանն ու զարգացմանը» (էջ 11)։ Այս թերությունը նկատելի է գրախոսվող աշխատության Սմբատ Սպարապետի, Ներսես Շնորհալու և Գրիգոր Նարեկացու հայացքների վերլուծությանը նվիրված բաժիններում։

Պրոֆ. Ն. Թովմասյանի աշխատության ամենակարևոր ու ամենահաջողված մասը հանդիսանում է առաջին բաժնի չորրորդ գլուխը՝ «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» խորագրով։

Տաթևացու սոցիալական հայացքների ելակետային գրույթն է ֆեոդալիզմի դասակարգային կառուցվածքը հասարակության գոյության նորմալ վիճակ համարելը։ Աշխարհիկ իշխանության և մարդկանց հարաբերությունը նա դիտում է որպես տիրոջ ու ծառայի, իսկ հոգևոր իշխանության և մարդկանց կապը՝ որպես հոր ու որդու հարաբերություն, այլ կերպ ասած՝ նա պաշտպանում է ենթարկողների և ենթարկվողների շահերի համերաշխության տեսությունը։ Հարստության և աղքատության հակադրությունը նա համարում է շահերի ներդաշնակության հիմք։

Տաթևացին հասարակական երևույթները բաժանում է երկու խմբերի՝ բարի և չար, մտքի գործողությամբ ձգտելով նպաստել չարի վերացմանը։ Պայքարելով աղանդավորական շարժման դեմ որպես չարիքի, նա օբյեկտիվորեն վեր է հանում այդ շարժման սոցիալ-քաղաքական բովանդակությունը։ Մեծ արժեք են ներկայացնում Տաթևացու կողմից տնտեսական երևույթների վերլուծությունն ու բնութագրությունը։ Նա որպես բնատնտեսության ժամանակաշրջանի մտածող, հատկապես ընդգծում է ապրանքների սպառողական արժեքների կարևորությունը մարդկանց պահանջմունքները բավարարելու գործում։ Պահանջմունքները բավարարող ապրանքները նա բաժանում է երկու՝ նյութական ու հոգևոր խմբի, իսկ նյութական բարիքները՝ առաջին անհրաժեշտության առարկաների ու վայելչական իրերի։

Նա վերլուծության է ենթարկում կյանքում արդեն զարգացած ապրանքային հարաբերությունները և նկատում, որ ոսկին ու արծաթը այդ պայմաններում ձեռք են բերում նաև հասարակական նշանակություն, որ նրանցով, որպես ընդհանրական արժեքներ, կարելի է ձեռք բերել բազմաթիվ ապրանքներ։ Նա նկատում է, որ փողային հարաբերությունները քայքայում են ֆեոդալական բնատնտեսությունը։ Մարդու սպառողական պահանջմունքները Տաթևացին համարում է հասարակական առաջընթացի զսպանակ և այստեղից եզրակացնում, որ կարիքը արտադրության կազմակերպման, աշխատանքի բաժանման, արվեստների ու գիտության զարգացման խթանն է։

Տաթևացին աշխատանքը համարում է մարդու բնածին հատկություն, գոյության պայման և դիտում է որպես սպառողական արժեքների արտադրության պրոցես։ Նա ընդգծում է ֆիզիկական ու մտավոր աշխատանքի տարբերությունը, բայց դրանց ընդհանրությունը տեսնում է նրանում, որ դրանք արտահայտում են սպառողական հարաբերություններ։ Տաթևացին մարդկային աշխատանքը համեմատելով մրջյունի գործունեության հետ, ընդգծում է, որ մրջյունը գործում է բնազդով, իսկ մարդը՝ բանականությամբ, որ մարդը ներգործում է բնության վրա նաև աշխատանքի գործիքներով, որոնց ստեղծումը մարդու ամենամեծ բարեմասնությունն է, իսկ կենդանիները զուրկ են դրանից։

Մարդկային աշխատանքի էության բարձրացման, նրա առանձնահատկությունների բնորոշման և աշխատանքի տարատեսակների վերլուծման կապակցությամբ Տաթևացու գրույթները իր ժամանակաշրջանի տնտեսական մտքի առաջընթացի ամենափայլուն արտահայտություններն են։ Տաթևացին խոսում է արժեքի գնի ու շահույթի մասին։ Ելնելով օգտակարության սկզբունքից, անտեսական գործունեության հիմքը համարում է արդարությունն ու փոխադարձ օգտակարությունը, որոնք արտահայտվում են կոնկրետ չափամիավորումներով (ծավալի, ծանրության, երկա-

ության չափերը)։ Նա պահանջում է, որ ապրանքները վաճառվեն իրենց արժեքով և դինը արժեքից բարձր ու ցածր չլինի։ Ըստ Տաթևացու, դինը կախված է հումքի արժեքից, տեղից ու ժամանակից և դնի ու «հասարակական նիհի» հարաբերակցությունից։

Տաթևացին շահույթը համարում է մարդկանց օգուտը, որը ստացվում է գյուղատնտեսությունից, արդյունագործությունից ու առևտրից. նա փաստորեն խոսում է մրցակցական պայքարի մասին և ճիշտ նկատում, որ առևտրական ու վաշխառուական կապիտալի շարժման նպատակը շահի ստացումն է։ Տաթևացին տարբերում է երկու կարգի առևտուր՝ համարժեքային և ոչ համարժեքային. համարժեքային առևտրից ստացած շահույթը արդարացնում է, իսկ ոչ համարժեքային առևտրից ստացվածը համարում է գողություն։ Աշխատանքի հասարակական բաժանումը, ասում է Տաթևացին, հետևանք է այն բանի, որ մարդկանց կարողությունները սահմանափակ են և նրանք, բնականորեն, իրենց բազմակողմանի պահանջները բավարարելու համար ստիպված են մասնագիտանալ արտադրության տարբեր բնագավառներում և մտնել փոխադարձ տնտեսական կապակցությունների մեջ։ Այլ կերպ ասած՝ աշխատանքի բաժանումը նյութական արտադրության կազմակերպման անհրաժեշտ պայման է և իրականանում է տարբեր մասնագետների համագործակցության ու փոխադարձ օգնության միջոցով։

Պաշտպանելով մարդկանց բնական հավասարության դրությը, Տաթևացին ժխտում է Պլատոնի բնածին գաղափարները և բնական անհավասարության տեսությունը։ Այլ կերպ ասած՝ նա մերժում է հասարակության դասակարգային կառուցվածքի հավերժականության տեսությունը։ Նկատելով կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանի երևույթները, նա իր կարեկցանքն է արտահայտում պանդուխտների ու թափառաշրջիկների նկատմամբ և դատապարտում է ունեզրկման միջոցով հարստության կուտակման պրոցեսը։ Արտադրական ճյուղերի կարևորությունը որոշելիս Տաթևացին հիմք է ընդունում մարդու ֆիզիկական գործունեությունը պահպանելու և մտավոր կարողությունները զարգացնելու սկզբունքը։

Տաթևացին խոսում է արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքի մասին և գովաբանում արտադրողական աշխատանքը։ Միանգամայն իրավացի է պրոֆ. Ն. Թովմասյանը, որ Տաթևացուն նվիրված բաժինը եզրափակում է հետևյալով՝ «Գրիգոր Տաթևացու տեղը և դերը միջնադարյան տնտեսագիտության զարգացման պատմության մեջ մեծ է և՝ սոցիալ-տնտեսական երևույթների ընդգրկման ծավալի, և՝ դրանց վերլուծության խորության տեսակետից։ Բազմավաստակ հեղինակը այդ երևույթների ուսումնասիրության բնագավառում ասում է իր ինքնուրույն խոսքը և դրանով իսկ հանդիսանում միջնադարյան տնտեսագիտական մտքի խոշորագույն դեմքերից մեկը»։

Գրախոսվող աշխատության երկրորդ բաժինը նվիրված է ժողովրդական ստեղծագործություններում՝ էպոսում, հեքիաթներում և առակներում արտահայտված սոցիալ-տնտեսագիտական մտքի հակիրճ գնահատմանը։ Հինգերորդ գլուխը նվիրված է «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի սոցիալ-տնտեսագիտական գաղափարների բնութագրմանը։ Հայտնի է, որ «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը արտահայտում է հայ ժողովրդի պայքարը արաբական խալիֆայության դեմ։ Էպոսում աշխատանքը մեծարվում է, ընդունվում որպես օրգանիզմի կենսական պահանջ, անհրաժեշտություն։ Ունեցվածքային անհավասարությանը վեպի ասացողները հակադրում են «ով աշխատի՝ նա ուտի» բաշխման սկզբունքը։ Վեպում քննադատվում են ֆեոդալական հասարակարգի այլանդակությունները և թագավորներն ու իշխանները ներկայացվում են որպես բացասական կերպարներ։ Վեպում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ տարբեր ազգերի աշխատավորները մեկ սոցիալական բանակ ներկայացնող բարեկամներ են և նրանց ընդհանուր թշնամիներն են շահագործողները։

Վեցերորդ գլխում վերլուծված են սոցիալ-տնտեսագիտական գաղափարները հայ ժողովրդական հեքիաթներում, իսկ յոթերորդ գլխում՝ սոցիալ-տնտեսագիտական գաղափարները միջնադարյան առակներում։

Պրոֆ. Ն. Թովմասյանը նյութը շարադրելիս առանձին հարցերի կապակցությամբ անդրադառնում է նախորդ հեղինակների գործերին, գնահատում կատարվածը և անհրաժեշտության դեպքում բանավիճում է՝ ձգտելով ուղղել այս կամ այն հարցի շուրջ եղած վրիպումները։ Այսպիսով, Ն. Թովմասյանի «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX—XIV դդ.» աշխատությունը կարևոր ներդրում է տնտեսագիտական մտքի պատմության մեջ և լրացնում է մեր գրականագիտական ժառանգության բնագավառում եղած բացը։

Վ. Մ. ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ